

է առնէ, — յաւել փմիդաւ, — Տուր ինծի ձեռքդ. տայ ինծի Աստուած որ ըստ արժանեացդ՝ կարենամ փոխարինել քեզի, վասն զի ասկէ վերջ կենօք և մահու չափ կապուած եմ քեզի հետ:

— Աղոր վրայ վերջը կը խօսինք, — պատասխանեց Միքայէլ, — Հիմա ուրիշ բանի վրայ մի՛ մտածեր, ջանա՛ն անցեալը ջնջել և փառք վաստկիլ. ես օրիորդ մը կը ճանչնամ որ պիտի ուզէ առատօրէն վարձատրել քաջութիւններդ:

— Անմիջապէս կ'ուզեմ անկողնէն ելլել, — գոչեց փմիդաւ, — քանի որ թշնամին հայրենիքս ոտնակոխ կ'ընէ, ինչպէս կըրնամ ես ծոյլ և անգործ անկողնոյ մէջ մնալ: Էյ, ո՛վ կայ հոն: Շուտ տուր ինծի զգեստներս, կայծակնահար ըլլամ, եթէ այսպէս անգործ հոս մնամ:

Վրդուտիւսը, գոհ, ժպտեցաւ ու ըսաւ.

— Հոգիդ մարմնէդ աւելի զօրաւոր է. մարմինդ դեռ ինքզինքը կառավարելու կարողութիւնը չունի: Համբերութիւն. քիչ օրէն ուժդ կը ստանաս նորէն:

Պնդապետը մեկնելու պատրաստուեցաւ: Արդէն իրիկուն էր երբ կարճահասակ ասպետը Լուպիչէն մեկնելով դէպ ի Վոտոգդի ուղղեց քայլերը:

— Անշուշտ օրիորդդ այսօր աւելի լաւ ընդունելութիւն մը կ'ընէ ինծի, — կը մըտածէր Միքայէլ ճամբան շարունակելով, և հառաչելով կ'ըսէր ինքնիրեն. — Ո՞վ կընայ ըսել ինծի թէ այս աշխարհիս մէջ իմ չարատանջ կեանքս սփոփելու նախասահմանուած կին մը կայ:

Հասաւ Վոտոգդի: Գիտախօս ժմուտցի մարդը վազեց դէպ ի դուռը, բայց չբացաւ.

— Օրիորդը տունը չէ, — ըսաւ:

— Ո՛ւր գնաց:

— Չեմ գիտեր:

— Ե՛րբ կը դառնայ:

— Ո՞վ գիտէ: Թեւեւ ա՛յ չի դառնար, ամենայն ինչ հետը տարաւ:

Միքայէլ, քանի մը վայրկեան լուռ կեանալէն վերջ, իւրհրդածեց ինքիրեն.

— Ինծմէ փախեր է անշուշտ:

Թրգմ. Հ. Ա. ԳՈՏՏԱՔՃԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ *

Կենսագրական ակնարկ Նրա քսանու-
 Ռինգամեայ երաժշտական գործունէու-
 Թեան առթիւ

Քսան և հինգ տարի անցաւ այն օրից, երբ Մոսկւայում հանգուցեալ պրոֆեսոր Գրիգոր Խալաթեանի ջերմ մշակցութեամբ ստաջին անգամ տպագրուեց եւրոպական նօտաներով հայ երաժշտագէտ Ն. Տիգրանեանի անդրանիկ աշխատութիւնը, Օր. I, որը կրում է «Անդրկովկասեան երգեր ու պարեր» վերնագիրը: Քսան և հինգ տարի անցաւ այն օրից, երբ արեւելեան եղաւնակների վարպետ մայիստրոն ստաջին անգամ փորձեց եւրոպական չափի և կաւոնների վերածել, մինչ այդ չափի ու կաւոնի չենթարկւած արեւելքի մուղամներն ու մեղեդիները, մէկ կողմից նրանց մէջ պահպանելով բուն եղանակը իր բոլոր մանրամասնութիւններով, միւս կողմից տալով նրանց եւրոպական փայլ և բարդ ու օրինակելի մշակում (обработка): Պէտքերու զիջումներով կոնսերվատորիայի անունին պրոֆեսոր Ն. Միլովեւը խօսելով երաժշտագէտի հէնց այս անդրանիկ աշխատութեան մասին (НОВОСТЯ) լրագրի 1894 թ. № 91-ի մէջ գովարանում է նրանց լոյս ընծայող երաժշտագէտին ասելով, որ Տիգրանեանը իր այդ արեւելեան՝ եղանակները և դրանց ոգուն համապատասխան և գեղարուեստական հարմոնիզացիան մշակել է շատ ճիշտ և հարազատ: Սա մի ծանր, բարդ և պատասխանատու ձեռնարկութիւն էր, որ իր ժամանակին սկսեց հայ երաժշտագէտը և ապա 25 երկար տարիների ընթացքում հասցրեց մի օրինակելի բարձրութեան, որով մի մեծ ծառայութիւն մատուցեց երաժշտական աշխարհիս: Եւ

* Բարեկամի մը փափաքը զոհանելու՝ և միանգամայն ազգային տաղանդ մը ծանօթացնելու դիտմամբ, կը հիւրընկալենք առաջիկայ կենսագրականը. յովթ.

այդ, երբ այժմ հարց է բարձրացրած տօնել այդ տաղանդաւոր երաժշտագէտի քսանութինգամեայ բեղմնաւոր և փայլուն գործունէութիւնը, մենք այդ յորելեանի նախօրեակին անհրաժեշտ ենք համարում ծանօթացնել հասարակութեանը նրա համառօտ կենսագրութեան հետ:

Նիկողայոս Տիգրանեանը ծնւել է Աղէքսանդրապօլ քաղաքում 1856 թ. Օգոստոսի 19ին մի արիստօկրատ ընտանիքում: Տիգրանեան տոհմը դեռ 19րդ դարի սկզբից գնահատելի ընդունակութիւններով օժտուած և աչքի ընկնող մի ընտանիք է եղել, որի մասին այնքան յարգանքով է խօսում մեծ հայրենասէր խաչատուր Աբովեանը իր «Վէրք Հայաստանի» աշխատութեան մէջ: Երաժշտագէտի երկու պապերն էլ՝ թէ՛ Նազարէթ աղա Տիգրանեանը և թէ՛ Սիրական աղա Գորոյեանցը իրենց ժամանակի ամենատաղանդակարգ անձինքն են եղել և հասարակական ու ազգային բոլոր գործերը իրանց ձեռքում ամփոփելով՝ տուել են նրանց իրենց ցանկալի ուղղութիւնը:

Սակայն ի պատիւ այդ երկու անհատների, պէտք է նկատել, որ նրանք երկուսն էլ մի ջերմ սիրով սիրել են իրենց հայրենիքն ու ազգը և շնորհիւ այդ բանի, նրանց գործունէութիւնն էլ միշտ եղել է յօգուտ իրենց հարազատ ժողովրդի, որը շնորհիւ 1829 թ. գեներալ Պասկեպիչի ձեռքով կատարուած գաղթականութեան, անցկացնում էր պատմական մի ծանր և յուսահատական ճգնաժամ:

Ահա այս երկու ռահվիրաների ժառանգներից ծնունց տաղանդաւոր երաժշտագէտը, որն իր գիտակցութեան հէնց առաջին օրերից տեսաւ ու բմբռնեց այն սէրն ու գորովը, որպիսին իր շնորհալի պապերը տածում էին դէպի բազմաշարժար հայ ժողովուրդը, և որպիսի հանգամանքն ունեցաւ աչքի ընկնող նշանակութիւն երաժշտի ապագայ գործունէութեան ընթացքում:

Նիկողայոս Տիգրանեանի հայրը՝ Թադէոս աղա Տիգրանեանը նոյնպէս մի շատ

աչքի ընկնող և համակրելի անձնաւորութիւն էր. նրա ժամանակակիցները խիստ սիրելի ու բարի յիշողութիւններ են պահում նրա մասին: Այդ լուսամիտ անձնաւորութիւնը ալէքսանդրապօլիցներից առաջինն էր, որ Այլական թուականներին աւարտեց թիֆլիսի առաջին կլասիկական գիմնազիան: Շնորհիւ այն հանգամանքի, որ նա ստացաւ հիմնաւոր և օրինակելի կրթութիւն, ապագայում նա ինքն էլ, երբ հայր դարձաւ, ամեն կերպ աշխատեց, որ իր բոլոր որդիքն էլ բարձր ուսում և կրթութիւն ստանան:

Թադէոս Տիգրանեանը ուսաց գործի փոխ-գնդապետ էր, մասնակցել է 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմին և ապա իրադատութեան դաշնագիրը կնքելուց յետոյ, երկար ժամանակ պատասխանատու պաշտօններ է վարել նոր նուաճուած երկրներում:

Երաժշտի մայր Երանունի խանում Տիգրանեանը, Սիրական աղա Գորոյեանցի դուստրը, մի շատ համակրելի և բարձր արժանաւորութիւններով օժտուած կին է: Շնորհիւ իր ուսումնասէր և լուսամիտ հօր, Երանունի Տիգրանեանը ստացել է օրինակելի կրթութիւն, որի շնորհիւ նա դարձաւ ինքն աչքի ընկնող ու շնորհալի որդիներ ի և մի գտեր բախտաւոր մայրը:

Գեռ երեխայ ժամանակուանից նկատելի էր փոքրիկ Նիկողայոսի արտասովոր ընդունակութիւնները, որոնք հիացմունք էին պատճառում նրա ծնրունի պապերին և որդեւէր հօրը:

Երբ լրանում է երեխայի 6 տարին, նրան տալիս են Աղէքսանդրապօլի հայկաթօրիկների դպրոցը, ուր փոքրիկ Նիկողայոսը սովորում է գրել-կարդալ և զարմացնում է ամենքին իր արտակարգ ընդունակութիւններով: Սակայն մի այլ դժբախտ ճակատագիր էր վիճակուած այդ սրամիտ ու վառվռուն մանկանը. ինքն տարեկան հասակում ծագրիկ հիւանդութիւնը զրկեց նրան տեսողութիւնից. տեղական բժիշկների բոլոր ջանքերն ապարդիւն անցան և մահուկ Նիկողայոսը զբ

կուեց երկու աչքերի լոյսից, իսկ սգի մէջ
թողնելով թէ իր ծնողներին և թէ ամ-
բողջ շրջապատը:

Սակայն սրամիտ մանկան ծնողները ի-
րենց հեռատես դիտողութեամբ որոնեցին

Այո՛, ապագայ երաժշտագէտի ծնողնե-
րը, չը յուսահատուեցին իրենց որդուն հա-
սած դժբախտութիւնից: Թաղէոս աղա Տի-
գրանեանը, այդ անզուգական հայրը իր
հանգիստը կորցրած, գիշեր-ցերեկ միջոց-



Երաժշտագէտ Նիկողայոս Տիգրամեան

ու գտան մի այլ ասպարէզ, ուր իրենց
դժբախտ զաւակը պիտի կարողանար ցոյց
տալ իր մէջ թագնած ընդունակութիւն-
ները, ապացուցանելով մեզ, որ տաղանդն
ու բնութիւնից պարգեւած խելքը, կարող
են զարգանալ և վերին աստիճանի ան-
մրիթիար պայմաններում:

Ներ էր որոնում, թէ ինչպէս անէ, որ իր
Նիկողայոս որդին էլ զուրկ չմնայ մտա-
ւոր լոյսից: Նստած կովկասի մի խուլ
անկիւնում նա սկսեց հետաքրքրուել ու
տեղեկութիւններ հաւաքել Եւրոպայի մայ-
րաքաղաքներից, այն տեղերում գոյութիւն
ունեցող կոյրերի դպրոցների մասին և

Վիեննայի կոյրերի կայսերական ինստիտուտը լաւագոյնը գտնելով՝ 1873 թ. փոքրիկ Նիկողայոսին տարաւ Աւստրիայի մայրաքաղաքը, տեղաւորեցրեց նրան այդ ինստիտուտում, ուր կոյր մանուկներն ըստանում էին օրինակելի և լուրջ գիտութիւն և ծանօթանում էին ժամանակակից բոլոր առարկաների հետ:

Պատանի Նիկողայոսը 6 տարի մնաց Վիեննայում և ստացաւ այն բարձր ունիվերսալ ուսումը և առանձնապէս կատարելագործումը երաժշտութեան մէջ, որն ապագայում հիմք ծառայեց նրան դասուել լույս յայտնի օրիէնտալիստ-կոնսրդիտորների շարքում:

Մեր հայրենակից երաժշտագէտին մեծ բաղձ էր վիճակուած արտասահմանում: Ծաւկատազրի մի առանձին տնօրէնութեամբ Վիեննայում նա ապրեց մի այնպիսի փառապանծ ընտանիքի մէջ, որն իր անջնջելի կնիքը դրոշմեց նրա ապագայ ամբողջ կեանքի վրայ: Դա պրօֆեսսոր և կայսերական ինստիտուտի դիրեկտոր Պարլաւսկի ընտանիքն էր, որն իր հարազատ գաւակի պէս ընդունեց ու սիրեց, — ինչպէս իրենք էին ասում — «Մեծ Տիգրաններ» ժառանգ ուսանող Տիգրանեանին: Պրօֆեսսոր Պարլաւսկի ընտանիքը, որը ցոյց տուեց պատանի Նիկողայոսին հարազատ ծնողներին յատուկ սէր ու զորով, յայտնի էր բարձր շրջաններին իր օրինակելի համեստութեամբ: Պրօֆեսսորն ու նէր 6 մանկամարդ զուտորներ, որոնք անվերջ կարողում էին երիտասարդ կովկասացու համար գերմանական հին ու նոր հեղինակների երկերից, և իրենց նազելի գրաւչութեամբ երբեմն — երբեմն ազմկում էին դժբաղդ պատանու սիրտը:

Մինչեւ այսօր էլ՝ հայ երաժշտագէտը մեծ յարգանքով ու առանձին ոգեւորութեամբ է խօսում իր տաղանդաւոր պրօֆեսսորի և նրա ընտանիքի անդամների մասին, որոնց հետ նա ղեռ մինչեւ օրս էլ պահում է սիրալիր ու սրտառու յարաբերութիւն:

Ահա այստեղ, այս ինտելիգէնտ շրջա-

նում, նա կոկուեց, յղկուեց և իւրացրեց գերմանացուն յատուկ մի քանի գեղեցիկ գծեր, որոնք նրա կեանքի և երաժշտական գործունէութեան մէջ առաջնակարգ տեղ բռնեցին:

Այստեղ մենք չենք կարող չը յիշել մի զուգադիպութիւն, որ տեղի ունեցաւ առաջին հայ մեծ վիպասան Խաչատուր Աբովեանի և առաջին հայ օրիէնտալիստ-կոմպոզիտորի կեանքերի մէջ: Երկուսին էլ հովանաւորում և խնամում են գերմանացի պրօֆեսսորներ. երկուսին էլ լուսաւորում և եւրոպացի են դարձնում գերմանացի ընտանիքներ: Տիգրանեանի համար Պարլաւսկը այն էր, ինչ որ Պարբոտը Աբովեանի համար:

Թողնելով հայ երաժշտագէտի կեանքում գերմանական ընտանիքի կատարած ազդեցութեան մանրամասնութիւնները մի այլ անգամի, այսքանը նկատենք, որ 1880 թուականին երաժշտագէտ Տիգրանեանը աւջող կերպով աւարտեց Վիեննայի կայսերական ինստիտուտը և ընդմիջտ վերադարձաւ իր հայրենի քաղաք — Ալէքսանդրապոլ:

Մեծ էր Թադէոս աղա Տիգրանեանի ուրախութիւնն ու հիացմունք, երբ առաջին անգամ ղիմաւորեց արդէն եւրոպացի դարձած իր որդուն: Բարի հայրը համոզուեց, որ իր զաւակն այլեւս կորած չէր և նա դարձել էր արդէն իր ազգի և ընտանիքի մի անհրաժեշտ և անզուգական անդամ:

Չմոռանանք յիշատակել և այն, որ հայ տաղանդաւոր երաժշտագէտը իր ինստիտուտում գտնուած ժամանակն էլ, առանձին պարագայում էր Վիեննայի կոնսերվատորիայի պրօֆեսսոր Շէշերի հետ, որն յայտնի է որպէս մի լուրջ երաժշտագէտ: Եւ ահա այդ ժամանակաշրջանից սկսած հայ երաժշտագէտը նուիրեց իրեն ազգային և արեւելեան եղանակների ուսումնասիրութեանը և շնորհիւ իր ատացած լուրջ կրթութեան ու տաղանդի իր պատուաւոր տեղը բռնեց արեւելեան երաժշտութեան պատմութեան մէջ:

Տիգրանեանի երաժշտական բեղմնաւոր գործունէութեան մասին չենք կամենայ այստեղ երկար կանգ առնել, սակայն անհրաժեշտ ենք համարում այսքանն ասել, որ նրա գլխաւոր արժանաւորութիւններէց մէկն էլ այն է, որ նա պետականի ճշտութեամբ ձայնագրելով ազգային և արեւելեան եղանակները, մեծ տաղանդով գտաւ արեւելեան երաժշտութեան համապատասխան և բնորոշ նարմոնիզացիա եւրոպական մոդիկայի տօնայայտով և հարմօնիայով:

Սակայն այդ ժամանակներում երաժշտագէտի համար ստեղծուել էր մի այլ բարեբաղդ հանգամանք, որն այնքան նպաստաւոր հետեւանք ունեցաւ նրա համար, իր սկսած դժուարին ձեռնարկութիւնը պատուաւոր կերպով գլուխ բերելու գործում:

Երաժշտագէտ Տիգրանեանի մօրաքոյրերից մէկը ամուսնացել էր Երեւանի հռչակաւոր Մելիք-Աղամալեան ընտանիքի մի շնորհալի զաւակի, Աղամալ Մելիք-Աղամալեանի հետ: Սա մի նշանաւոր նուագող էր (Թառգան) և լրիւ ու հիմնական կերպով սովորել ու ըմբռնել էր պարսկական և արեւելեան բազմաթիւ ու բազմաբովանդակ մուշակներն ու քայաքիները: Ինքը Աղամալ աղան աննման կերպով ածում էր թառի վրայ. նրա քնքոյշ միջոցաւ անհամար երկրպագուներ ունէր կովկասեան բոլոր ազգերի ընդարձակ շրջաններում:

Ահա այս անզուգական անձնաւորութիւնն էր, որ արգելք Տիգրանեանի վրայ, սեր ներշնչեց նրա մէջ դէպի արեւելքի երաժշտութիւնը և դարձաւ նրա ուսուցիչը: Եւ Տիգրանեանը օգտուեց Մելիք-Աղամալեանից ինչքան որ ուզեց, ու շնորհիւ այս հանգամանքի նա ձայնագրեց և հրատարակեց իր գողորիկ «Բայաթի Շիրազը», խրոխտ «Բայաթի Քիրդը», աննման «Չարգահը», «Շահնազը», «Հէյդարին», «Նովրուզ Արաբին» և այլն, և այլն, որոնք բոլորն էր իրենց բովանդակութեամբ թէ՛ւ պարսկական կրտսիկ երկեր են, բայց միեւնոյն ժամանակ նրանք բոլոր արեւելեան ազգերին էլ, որոնց թուում և մեզ հայերիս համար այնքան ընտանի են ու հարազատ:

Բացի այս նշանաւոր երկերից երաժշտագէտն ունի նաեւ բազմաթիւ հայկական, պարսկական և վրաց ժողովրդական երգեր ու պարեր:

1894 թ. Ն. Տիգրանեանը գնաց Պետերբուրգ և մի տարի պարտաւեց յայտնի պրօֆեսոր Ն. Սոլովիւի մօտ, բացառապէս կօմպօզիցիայով:

Շնորհիւ նրա հրատարակած բազմաթիւ երկերի, նրա անունը յայտնի դարձաւ թէ բովանդակ Ռուսաստանում և թէ արտասահմանում, և այսօր նշանաւոր երաժիշտները իրենց յեպիրտուարի մէջ դնում են նաեւ նրա երաժշտական երկերը: Օրինակի համար՝ դաշնակահար Լանդովսկա, ջութակահար պրօֆ. Նալբանդեան, երգչուհի և դաշնակահար Բարայեան ցոյրերը և ուրիշները:

Նա միշտ մտերիմ յարաբերութիւնների մէջ է եղել բոլոր հայ երաժիշտների և երգիչների հետ: Առանձնապէս նա սիրում էր Մ. Եկմալեանին, որի տաղանդի և պատրաստականութեան վերայ նա միշտ խօսում էր հիացմունքով:

1894 թ. սկսած մինչեւ հիմա նա բազմաթիւ կոնցերտներ է տուել Ռուսաստանի և կովկասի զանազան քաղաքներում և արժանացել է կօմպետետ հասարակութեան կողմից գովասանքի ու յարգանքի: Նոյն իսկ ռուս հռչակաւոր երաժիշտ և քննադատ իվանովը, նրա մասին միշտ խօսել է յարգանքով (« Новое Время » № 6519 — 1894 թ., № 7616 — 1897 թ. և այլն և այլն):

Եւ ահա, Տիգրանեանի այս բեղմնաւոր աշխատութեան համար այսօր հրապարակի վրայ է դրուած նրա 25ամեայ յորելեանի կատարման հարցը:

Տեսնենք թէ հայ հասարակութիւնը ինչպէս և ինչով պէտք է արտայայտէ իր յարգանքն ու երախտագիտութիւնը դէպի իր տաղանդաւոր զաւակը, որը քաղորդ դար շարունակ անխոնջ ու անզուգրում աշխատել ու գործել է մեր այս աննպաստ միջավայրում:

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԹԵԱՆ

1912 թ. Օգոստ. 20

A.R.A.R. @